

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
մայիսի 16-ի նիստի N 19
արձանագրային որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I - Արտարժութային պարտավորումների թողարկումը.....3

1. Արտարժութային պարտավորումների (Եվրապարտավորումների) թողարկման ընդհանուր դրույթները, շարժանիթը, նպատակը, դրական և բացասական կողմերը.....	3
Ընդհանուր դրույթներ.....	3
Եվրապարտավորումների տեսակները.....	4
Եվրապարտավորումների թողարկման դրական կողմերը.....	6
Եվրապարտավորումների թողարկման մարտահրավերները և ռիսկերը.....	7
Եվրապարտավորումների առաջին թողարկման հետ կապված ծախսերը.....	8
Եվրապարտավորումների առաջին թողարկման ժամկետայնության հարցերը.....	9
2. Եվրապարտավորումների թողարկման հնարավոր ներդրողները.....	10
Եվրապարտավորումների շուկայի մասնակիցները.....	10
Եվրապարտավորումների թողարկման ժամանակացույցը.....	12
Գլխավոր տեղաբաշխողի ընտրության մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները.....	16
3. Եվրապարտավորումների թողարկումը կանխիկ հոսքերի տեսանկյունից .	20

Գլուխ II - Պարտքի ավելացման սահմանափակումները 21

4. Արտաքին պետական պարտքի ավելացման սահմանափակումներ.....	21
Արտաքին պետական պարտքը և տնտեսական աճը.....	21
Եվրապարտավորումների թողարկման նախապայմանների առկայությունը.....	23
5. Արտաքին պետական պարտքի կլանման հնարավորությունները.....	24
Իրական հատվածում.....	24
Բանկային հատվածում.....	24
Պետական հատվածում.....	25
6. Արտաքին պետական պարտքի ավելացման ազդեցությունը Հայաստանի արտաքին պարտքի և հարկաբյուջետային կայունության վրա.....	26
7. Եզրահանգումներ.....	26

Գլուխ I - Արտարժույթային պարտավորումների թողարկումը

1. Արտարժույթային պարտավորումների (Եվրապարտավորումների) թողարկման ընդհանուր դրույթները, շարժառիթը, նպատակը, դրական և բացասական կողմերը

Ընդհանուր դրույթներ

Արտարժույթային պարտավորումների առաջնային թողարկումը միջազգային կապիտալի շուկաներում զարգացող երկրների համար բավականին պատասխանատու գործընթաց է՝ առնվազն երկու տեսանկյունից: Նախ, վերոնշյալ գործընթացը մինչ կապիտալի շուկա մուտք գործելը պահանջում է խիստ մեծածավալ աշխատանք՝ թողարկման տեղաբաշխումից առաջ բոլոր վերլուծա-տեղեկատվական փաստաթղթերի պատրաստման տեսանկյունից, որն անհրաժեշտ է լինելու թողարկումը երկրի համար «խելամիտ գնով» տեղաբաշխելու համար: Երկրորդ՝ հետ տեղաբաշխման ժամանակահատվածում մեծ ջանքեր և գիտելիքներ են պահանջվելու պետական պարտքի և դրա հետ կապված ռիսկերի կառավարման տեսանկյունից: Այնուամենայնիվ պետք է նշել, որ եթե երկիրը չունի միջազգային կապիտալի շուկայում թողարկված պարտավորումներ, դա նշանակում է, որ սվյալ երկրի տնտեսությունը ընդհանուր հաշվով դուրս է միջազգային ֆինանսական քարտեզից, քանզի մասնավոր հատվածի համար խիստ ծախսատար է լինում առանց պետության «գնանշման» միջազգային շուկաներում թղթեր թողարկելը, իսկ պոտենցիալ ներդրողների համար նշյալ երկրի սուբյեկտների արժեթղթերը լինում են դժվար ընկալելի, որի դիմաց սովորաբար նրանք պահանջում են լրացուցիչ ռիսկերի փոխհատուցումներ: Միջազգային շուկաներում կառավարության կողմից պարտքի թողարկումը, մյուս կողմից, պահանջելու է շարունակական կանոնակարգված մակրոտնտեսական և հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացում: Մակրոտնտեսական քաղաքականության թերացումները և խեղաթյուրումներն անմիջապես ազդելու են երկրորդային շուկայում շրջանառվող պետական արժեթղթերի գների վրա՝ տանելով դրանց դեպի նվազում, իսկ դա էլ իր հերթին ազդելու է նոր պարտքի թողարկման տոկոսադրույքների վրա՝ աճի ուղղությամբ: Սակայն դրա հետ մեկտեղ արտաքին շուկաներում պարտքի թողարկումը հնարավորություն է տալիս պետությանը մուտք ունենալու

“չկապակցված” ֆինանսական ռեսուրսներին և շուկայական կոնյուկտուրայից կախված կատարելու ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարում:

Պետք է նաև նշել, որ Եվրասիական ու Աֆրիկական տարածաշրջանների զարգացող երկրների համար միջազգային կապիտալի շուկաները, որտեղ կատարվում են պետական արժեթղթերի առաջնային թողարկումներ, հիմնականում Լոնդոնի և ավելի քիչ ֆրանկֆուրտի, Ցյուրիխի կապիտալի շուկաններն են: Ընդունված է միջազգային տնտեսագիտական լեզվաբանության մեջ այս երկրների համար միջազգային կապիտալի շուկաներում թողարկումներն անվանել “Եվրապարտատոմսերի” թողարկում:

Եվրապարտատոմսերը թողարկողներին հնարավորություն են տալիս առաջարկել այդ ֆինանսական գործիքները տարբեր երկրների և ներդրողների՝ հիմնվելով համապատասխան կարգավորվող օրենսդրական, տնտեսական, փոխարժեքի միջավայրի և այլ գործոնների վրա: Եվրապարտատոմսերի թողարկումն ունի հատուկ ընթացակարգ: Եվրապարտատոմսերի շուկան կազմում է միջազգային պարտատոմսերի շուկայի գերակշիռ մասը: Եվրապարտատոմսերը սովորաբար դասակարգվում են՝ ելնելով պարտատոմսերի թողարկման արտարժույթից, երկրի վարկանիշից, ժամկետայնությունից, տոկոսադրույքից (լողացող կամ ֆիքսված) և այլն:

Եվրապարտատոմսերի տեսակները

Հաստատուն տոկոսադրույքով (conventional or straight bonds) - ունի ֆիքսված տոկոսադրույք (արժեկտրոն), որը սովորաբար վճարվում է տարեկան կտրվածով և մարման օր, երբ ամբողջությամբ մարվում է մայր գումարը:

Լողացող տոկոսադրույքով (floating rate bonds) - սովորաբար լինում են կարճաժամկետ կամ միջնաժամկետ: Տոկոսադրույքները փոփոխվում են՝ կախված ուղենշային տոկոսադրույքից (LIBOR, EURIBOR) և <<սպրեդից>> (այն լրացուցիչ տոկոսադրույքն է, որը կախված է թողարկողի վարկունակությունից /credit quality/):

Փոխարկելի (Convertible bonds) - կարող են փոխարինվել մեկ այլ գործիքով, սովորաբար որևէ հասարակ բաժնետոմսերով: Պարտատերը ինքն է որոշում փոխարինել պարտատոմսը թե ոչ: Վճարվելիք արժեկտրոնները համեմատաբար ավելի ցածր են, քանի որ փոխարկելի պարտատոմսերը կարող են դիտարկվել ավելի շատ որպես բաժնային /equity sheares/ բաժնետոմսեր, քան պարտատոմսեր:

Հետ կանչվող (Callable bonds) – սա պարտատոմսերի տեսակ է, որը հնարավորություն է տալիս թողարկողին պարտատոմսի “կյանք” ժամանակահատվածի ցանկացած պահին մարել այն մինչ վերջնական ժամկետի ավարտը:

Ներկայացվող (Puttable bonds) – պարտատոմսի տեսակ է, որը հնարավորություն է տալիս պարտատոմսի սեփականատիրոջը մինչ պարտատոմսի վերջնաժամկետը իր համար նախընտրելի ժամանակահատվածում ներկայացնել այն թողարկողին մարման և պահանջել մայր գումարը:

Զեռոստոկոսով (zero-coupon bond) – այս տեսակի դեպքում պարտատոմսը թողարկվում է իր անվանական արժեքից զեղչված գնով և մարվում անվանական արժեքով: Սովորաբար այս տեսակի պարտատոմսերը կարճաժամկետ են լինում:

Ինդեքսներին ամրագրված (indexed bonds) – պարտատոմսի տեսակ է, երբ մայր գումարի արժեքը ամրակցվում է որևէ ինդեքսի (սովորաբար գնաճին) և փոփոխվում է պարտատոմսի կյանքի տևողության ընթացքում՝ կախված ինդեքսի վարքագծից:

Ըստ եկամտաբերության (yield bonds) - վարկանշային կազմակերպությունների կողմից տրված վարկանիշերի համաձայն սրանք դասակարգվում են ստորև բերված աղյուսակի համաձայն:

Պետական պարտատոմսերի կատեգորիաները աշխարհում ըստ վարկանշման

Moody's		S&P		Fitch		
Երկարաժամկետ	Կարճաժամկետ	Երկարաժամկետ	Կարճաժամկետ	Երկարաժամկետ	Կարճաժամկետ	
Aaa	P-1	AAA	A-1+	AAA	A1+	(Prime)
Aa1		AA+		AA+		
Aa2		AA		AA		
Aa3		AA-	AA-	Բարձր վարկանշային (High grade)		
A1		A+	A-1		Ա1	
A2	P-2	A	A-2	A	A2	Միջին բարձր վարկանշային (Upper Medium grade)
A3		A-		A-		
Baa1		BBB+	BBB+	A3	Միջին ցածր վարկանշային (Lower Medium grade)	
Baa2	BBB	BBB				
Baa3	BBB-	BBB-				
Ba1	Not Prime	BB+	B	BB+	B	Ոչ ներդրումային վարկանիշով, սպեկուլյատիվ (Non Investmentgrade speculative)
Ba2		BB		BB		
Ba3		BB-		BB-		
B1		B+		B+		
B2		B		B		

B3		B-		B-		
Caa		CCC	C	CCC	C	Նշանակալի ռիսկ (Substantial risks)
Ca		CC				Խիստ սպեկուլյատիվ (Extremely speculative)
C		C				Դեֆոլտ՝ վերականգնման փոքր հեռանկարով (In default with little prospect for discovery)
/		D	/	DDD	/	Դեֆոլտ (In default)

Եվրապարտատոմսերի շուկայում շրջանառվող գործիքների մեծ բազմազանությունն (ներկայումս դրանց թիվը ութսունից ավելի է) իհարկե բավական գրավիչ է դարձնում այդ միջավայրը ինչպես պարտքի կառավարման ճկունության ապահովման, այնպես էլ ներդրողների ու փոխառու միջոցների դիվերսիֆիկացման տեսանկյունից: Սակայն, ներկայումս մենք կարող ենք դիտարկել միայն ֆիքսված տոկոսադրույքով պարտատոմսերի թողարկման հնարավորությունը, ինչը բխում է ՀՀ պարտքի կառավարման ռազմավարությունից և էապես նվազեցնում է տոկոսադրույքի և վերաֆիքսման ռիսկերը: Նշենք նաև, որ հիշյալ շուկայում շրջանառվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալում ֆիքսված տոկոսադրույքով արժեկտրոնային պարտատոմսերը գերակշիռ մասնաբաժին ունեն:

Եվրապարտատոմսերի դրական և բացասական կողմերը

Ինչպես արդեն ներկայացվեց, եվրապարտատոմսերի թողարկումը թողարկողի համար ունենում է դրական կողմեր, սակայն դրա հետ մեկտեղ առաջ են գալիս նաև բացասական դրսևորումներ, որոնք, թողարկողի տեսանկյունից, կարևոր է դարձնել խիստ կառավարելի: Եվրապարտատոմսերի թողարկման դրական և բացասական կողմերը թվարկված են ստորև:

Եվրապարտատոմսերի թողարկման դրական կողմերը

- Պետական փոխառության ներգրավումը ծախսերի հետ փոխկապակցված չէ,
- Հնարավորություն է տալիս դիվերսիֆիկացնել պետական փոխառությունների աղբյուրները,
- Հնարավորություն է տալիս մասնավորի համար նվազեցնել ապագա թողարկումների արժեքը՝ եկամտաբերության ուղենիշի ստեղծման միջոցով,

- Դյուրացնում է Եվրապարտատոմսերի թողարկման միջոցով կանխիկ հոսքերի կառավարման տեսանկյունից հետագա ֆինանսավորման ներգրավման գործընթացը,
- Բարձրացնում է երկրի ֆինանսական քաղաքականության թափանցիկությունը,
- Անուղղակի ստիպում է տնտեսական քաղաքականության պատասխանատուներին մակրոտնտեսական քաղաքականություններում պահպանել հաշվեկշռվածություն:

Ի լրումն վերը թվարկվածի, Հայաստանի դեպքում առկա է ևս մեկ դրական գործոն՝ Հայաստանի բանկային համակարգը արտարժութային իրացվելիության խնդիրները լուծելիս¹ կարող է գնել Հայաստանի Հանրապետության կողմից թողարկած Եվրապարտատոմսերը, ինչը կնշանակի, որ տնտեսությունից արտարժութային միջոցների արտահոսքի ծավալը կնվազի:

Եվրապարտատոմսերի թողարկման մարտահրավերները և ռիսկերը

Եվրապարտատոմսերի հաջող թողարկման համար անհրաժեշտ են նախապես ապահովել որոշակի պայմաններ, որոնք էապես ազդում են պարտատոմսերի տեղաբաշումների՝ հատկապես ձևավորվող գնի վրա: Դրանք են՝

- Առնվազն երկու միջազգային վարկանշային գործակալությունների կողմից տրված վարկանիշի առկայությունը,
- Երկրում կայուն տնտեսական և քաղաքական իրավիճակի առկայությունը,
- Կայուն բանկային համակարգի առկայությունը,
- Պետության կողմից որակյալ դրամավարկային քաղաքականության իրականացումը,
- Պարտքի արդյունավետ կառավարման իրականացումը:

Պետք է նաև նշել, որ երկրների միջազգային փորձը ցույց է տալիս, որ վերը նշված պայմանները պարտատոմսերի հաջող թողարկում իրականացնելու պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններն են:

¹ Համաձայն 2012թ. հունիսի 26-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 168 որոշման, Հայաստանի բանկային համակարգում կմեծանա արտարժութային իրացվելիության նկատմամբ պահանջը, ինչը կարող է որոշակի պահանջարկ առաջացնել Հայաստանի Հանրապետության կողմից թողարկած Եվրապարտատոմսերի նկատմամբ:

Եվրապարտատոմսերի առաջին թողարկման հետ կապված ծախսերը

Եվրապարտատոմսերի յուրաքանչյուր թողարկում կապված է ֆիքսված մեծ ծախսերի հետ, ուստի փոքրածավալ թողարկումները ծախսատար են: Մյուս կողմից, փոքրածավալ թողարկումը մասնակիցների շրջանակում հետաքրքրվածություն կարող է չառաջացնել, քանի որ դիտարկվում է որպես ոչ իրացվելի:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ առաջին թողարկման համար որպես նվազագույն արդյունավետ ծավալ կարող է սահմանվել 500 մլն. ԱՄՆ դոլարը, քանի որ թողարկողի վրա տեղաբաշխման վճարի բեռը կլինի ցածր, իսկ ներդրողների կողմից դա դիտարկվում է իրացվելի ծավալ և առաջացնում է խթան՝ մասնակցության շրջանակի ընդլայնման համար: Այդ կապակցությամբ ստորև ներկայացնում ենք 500 մլն ԱՄՆ դոլար թողարկման ծավալի և 10 տարի ժամկետայնության եվրապարտատոմսերի առաջին թողարկման հետ կապված ծախսերի կառուցվածքը /Աղյուսակ 1./:

Աղյուսակ 1

ԱՄՆ դոլար	Նվազագույն		Առավելագույն
Ֆիսկալ գործակալ	25,000	-	35,000
Վճարումների գործակալ	17,000	-	19,000
Ցուցակում	6,000	-	8,000
Գլխավոր տեղաբաշխողի իրավական խորհրդատվություն	250,000	-	300,000
Ռոուդ - շոու	100,000	-	150,000
Տպագրական ծախսեր	15,000	-	20,000
Այլ ծախսեր	10,000	-	15,000
ԸՆԴԱՄԵՆԸ	423,000	-	547,000
% Թողարկման ծավալից	0.09%	-	0.11%
% Թողարկման ծավալից, տարեկան	0.01%	-	0.01%
Տեղաբաշխման վճար	0.10% -0.15% թողարկման ծավալից բոլոր գլխավոր տեղաբաշխողների դեպքում:		

Հաշվարկները նախնական են և աղբյուր է հանդիսացել եվրապարտատոմսերի թողարկման միջազգային փորձը, այդ շուկայում գործող որոշ մասնակիցների կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրած առաջարկություններում տեղ գտած տեղեկատվությունը: Ըստ ներկայացված հաշվարկների, տեղաբաշխման վճարի բեռը՝

տեղաբաշխման հետ կապված ծախսերի կշիռը տեղաբաշխման մեջ կազմում է 0.1-0.15 տոկոս: Նշենք նաև, որ 750 մլն կամ 1 մլրդ ԱՄՆ դոլարով թողարկում իրականացնելի ծախսերի կառուցվածքում էական փոփոխություն տեղի չի ունենա:

Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների սուվերեն առաջին և երկրորդ տեղաբաշխումների պատմական վիճակագրությունը ներկայացված է Հավելված 1-ում:

Եվրապարտատոմսերի առաջին թողարկման ժամկետայնության հարցերը

Երկարաժամկետ՝ 10 տարի մարման ժամկետով եվրապարտատոմսերի թողարկումը հնարավորություն է տալիս թողարկման ծախսերը բաշխել ավելի երկար ժամանակահատվածի համար և ապահովում է երկարատև ֆինանսավորում, սակայն մյուս կողմից երկարաժամկետ պարտատոմսերի դեպքում բարձրանում է տոկոսադրույքը:

Աղյուսակ 2-ում. ներկայացրած տեղեկատվությունից պարզ է դառնում, որ արժեկտրոնային եկամտաբերությունները 5 և 10 տարի ժամկետայնության պարտատոմսերի համար տարբերվում է մոտավորապես 1.1 տոկոսային կետով, իսկ 5 տարի մարման ժամկետայնության պարտատոմսերի միջակայքը 4.0-5.0 տոկոս է: Այսինքն, եվրապարտատոմսերի շուկայում ձևավորված միտումներից կարելի է ենթադրել, որ եթե Հայաստանն իրականացնի առաջնային թողարկում, ապա եկամտաբերությունը կգտնվի նշված միջակայքում: Հայաստանի համար նպատակահարմար է դիտարկել 10 տարի ժամկետայնության պարտատոմսերի տեղաբաշխման հնարավորությունները, քանի որ այդ դեպքում կնվազեցվի պարտքի վերաթողարկման հետ կապված հնարավոր ռիսկերը:

Աղյուսակ 2

	5 տարի	10 տարի	Տեղեկատվության ներկայացման ամսաթիվ
HSBC բանկ	5.875-6.00%		Հունվար 2012
ՎՏԲ բանկ	5.25%	6.40%	Սեպտեմբեր 2011
Sberbank	4.375-4.625%	5.5-5.575%	Փետրվար 2013

2. Եվրապարտատոմսերի թողարկման հնարավոր ներդրողները

Եվրապարտատոմսերի շուկայի մասնակիցները

Եվրապարտատոմսերի շուկան բաղկացած է ներդրողներից, բանկերից, վարկառուներից և առևտրային գործակալություններից, որոնք կատարում են առք, վաճառք և փոխանցումներ:

Շուկան բաղկացած է տարբեր մասնակիցներից: Թողարկողը (բանկը, գործարարը, միջազգային կազմակերպությունը կամ կառավարությունը) նախ դիմում է որևէ ներդրումային բանկի խնդրելով թողարկել իր պարտատոմսերը: Վերջինս հանդիսանում է որպես գլխավոր կառավարիչ կամ տեղաբաշխող, որը կարող է ստեղծել կառավարման խումբ /managing group/ առաջարկելով այլ բանկերին միավորվել այդ գործընթացին: Այնուհետև Կառավարիչների խումբը բանակցում է պարտատոմսերի և դրանց թողարկման պայմանները: Վերջիններս կազմակերպում են պարտատոմսերի վաճառքը անդերրայթերի /underwriter/ միջոցով կամ կատարում են ուղիղ վաճառք՝ վաճառող խմբին /selling group/: Այսինքն, առկա է 3 մակարդակ՝ կառավարիչներ, անդերրայթեր և վաճառողներ, որն անվանվում է սինդիկատ /syndicate/:

Անդերրայթերները գնում են պարտատոմսերը նվազագույն գնով և հաշվարկում են ռիսկերը, երբ հնարավոր չի լինի վաճառել վերջիններս շուկայում ավելի բարձր գնով: Անդերրայթերները (կամ կառավարիչների խումբը, եթե անդերրայթեր չկան) վաճառում են պարտատոմսերը վաճառող խմբին, որը տեղաբաշխում է պարտատոմսերը ներդրողներին: Սինդիկատային կազմակերպությունները և ներդրող հաճախորդները համարվում են եվրապարտատոմսերի շուկայի առաջնային մասնակիցներ, իսկ երբ վերջիններս վերավաճառում են հիմնական ներդրողներին, պարտատոմսերը սկսում են շրջանառվել երկրորդային շուկայում: Մասնակիցները շուկայում կազմավորվում են International Primary Market Association of London and Zurich based international security market association-ի կողմից:

Երբ պարտատոմսերը թողարկվում են, բանկը գործում է որպես հիմնական վճարող գործակալ, որը պատասխանատու է տոկոսավճարների և մայր գումարի հավաքագրման և համապատասխան վճարումների համար:

Ստորև ներկայացվում է մասնակիցների և նրանց պատասխանատվությունների աղյուսակը:

Եվրապարտատոմների թողարկման հիմնական մասնակիցները և նրանց պարտականությունները

Աղյուսակ 3

Թողարկող	Թողարկում է եվրապարտատոմներ
Գլխավոր տեղաբաշխողներ	Համակարգում է տեղաբաշխման գործընթացը, Սահմանում է մարկետինգային ռազմավարությունը, Պատասխանատու է պարտատոմների տեղաբաշխման համար, Աջակցում է երկրորդային շուկայում պարտատոմների իրացվելիությանը
Վճարային գործակալ	Մասնակցում է արժեկտրոնների, մայր գումարի մարումների և այլ վճարումների իրականացմանը
Իրավական խորհրդատուներ	<p>Կազմակերպիչներին ներկայացնող իրավաբաններ</p> <ul style="list-style-type: none"> • Խորհրդատվություն են տրամադրում կազմակերպիչներին • Կարծիք են ներկայացնում թողարկման պրոսպեկտի նախագծի վերաբերյալ • Պատրաստում են գործառնական փաստաթղթեր • Պատրաստում են իրավաբանական կարծիք <p>Թողարկողին ներկայացնող իրավաբաններ</p> <ul style="list-style-type: none"> • Խորհրդատվություն են տրամադրում թողարկողին • Մասնակցում են բոլոր փաստաթղթերի համաձայնեցմանը • Կազմում են երկրի ընթացիկ իրավիճակը և դրա բարելավմանն ուղղված միջոցառումները նկարագրող պրոսպեկտի մասը • Պատրաստում են իրավաբանական կարծիք
Ցուցակման (լիստինգի) գծով գործակալ	Կազմակերպում է եվրապարտատոմների լիստինգը, Իրականացնում է բորսայի հետ համագործակցությունը
Վստահված անձ (trustee)	Ներկայացնում է ներդրողների շահերը, Հետևում է պարտատոմների տեղաբաշխման կանոնների կատարմանը

Եվրապարտատոմսերի թողարկման ժամանակացույցը

Եվրապարտատոմսերի թողարկումը հիմնականում իրականացվում է 8 փուլերով: Ընդ որում յուրաքանչյուր փուլի տևողությունը կազմում է 1-2 շաբաթ: Ընդհանուր հաշվարկով Եվրապարտատոմսերի թողարկման տևողությունը կկազմի շուրջ 8-16 շաբաթ կամ մոտավորապես 4 ամիս: Շրջագայությունները և շնորհանդեսները (Road Show) նախատեսվում է իրականացնել 8-րդ շաբաթից սկսած մինչև 15-րդ շաբաթ: Առավել մանրամասն ժամանակացույցը ըստ գործողությունների և պատասխանատվությունների ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Եվրապարտատոմսերի թողարկման ժամանակացույցը		
Ժամանակաշրջանը	Գործողությունները	Պատասխանատվությունը²
Փուլ 1 (1-2 շաբաթ)	Գլխավոր տեղաբաշխողների և գլխավոր խորհրդատուների նշանակում	I
	Նախնական հուշագրի/Մանդատային նամակի ստորագում	I, LM
	Հանդիպում Առաջին, պատասխանատվությունների բաշխում	LM,I
	Աշխատանքային խմբի ստեղծում և մանրամասն ժամանակագրության նկարագրում	LM,I
Փուլ 2 (1-2 շաբաթ)	Ֆոնդային բորսայի ընտրություն	I,LMC,LM
	Համապատասխանության ստուգաթերթի պատրաստում և շրջանառում	LM,LMC
	Արժեթղթերի ազդագրի (Offering Circular) նախապատրաստում	I,IC,LM,LMC
	Գործառնական փաստաթղթերի նախապատրաստում	I,IC,LM,LMC
	Անհրաժեշտ հաստատումների վերանայում	LM,IC
Փուլ 3 (1-2 շաբաթ)	Ֆիսկալ գործակալի /Ցուցակման գործակալի/Տպագրիչ Գործակալի/այլ երրորդ կողմերի նշանակում	I
	Իրավական եզրակացության նախապատրաստում	I,LM, IC
	Համապատասխանության ստուգման (Due Diligence) հանդիպումներ	I,LM,LC,LMC
	Ամփոփ ազդագրի (OC) վերանայում համապատասխանության ստուգման (DD)	I,IC

² Պատասխանատվություն սյունյակում նշված հապավումների նշանակությունները հետևյալն են. LM-Գլխավոր տեղաբաշխողներ, I-Թողարկող, IC-Թողարկողի իրավախորհրդատու, LMC-Գլխավոր տեղաբաշխողի իրավախորհրդատու

	հանդիպումների արդյունքում	
Փուլ 4 (1-2 շաբաթ)	Ներդրողների համար ներկայացման պատրաստում	LM
	Վարկանշող ընկերություններին դիմում	I,LM
	Իրավական փաստաթղթերի նախագծերի շրջանառում և վերանայում	I,LM,LMC,IC
	Ազդագրի (OC) նախապատրաստում և վերանայում	I,IC
	Նախնական ազդագրի ներկայացում Ցուցակման գործակալին	I,IC
Փուլ 5 (1-2 շաբաթ)	Ազդագրի և իրավական փաստաթղթերի պատրաստման աշխատանքների շարունակում	I,IC,LMC
	Իրավական կարիքների վերանայում և շրջանառում	I,IC
	Լրամշակված ազդագրի ներկայացում Ցուցակման գործակալին	I,IC
Փուլ 6 (1-2 շաբաթ)	Ազդագրի վերաբերյալ աշխատանքային խմբի դիտողությունների և առաջարկությունների դիտարկում	IC,I
	Լրամշակված ազդագրի վերաբերյալ Ցուցակման գործակալի դիտողությունների և առաջարկությունների դիտարկում	LM,LMC,IC,I
	Ազդագրի վերջնական տարբերակի հաստատում և տպագրություն	IC
	Ցուցակման գործակալի դրական կարծիքի ստացում	IC
	Համաձայնեցված ձևաչափով իրավական փաստաթղթերի շրջանառում	IC,LMC
Փուլ 7 (1-2 շաբաթ)	Մինչ հրապարակումը համապատասխանության ստուգում	LM,LMC,I,IC
	Գործարքի հրապարակում (կախված շուկայի դրությունից)	LM
	Ներդրողներին նախնական ազդագրի առաքում	LM
	Մինչ գնանշումը համապատասխանության ստուգում	LM,LMC,I,IC

	Գնանշում (կախված շուկայում տիրող իրավիճակից) և տեղաբաշխում	I,LM
	Թողարկման գնի տեղեկացում	LM
	Բաժանորդագրության համաձայնագրի ստորագրում	LM,LMC,I,IC
	Ազդագրի տպագրություն	IC
	Բոլոր անհրաժեշտ որոշումների ընդունում	LM,LMC,I,IC
Փուլ 8 (1 շաբաթ)	Գործարքի փակում	LM,LMC,I,IC
	<ul style="list-style-type: none"> Նախապայմանների բավարարում (CPS) (իրավական կարծիք և այլն) 	
	<ul style="list-style-type: none"> Պարտատոմսերի նկարագրի (Temporary Global Note) ներկայացում դեպոզիտարիա 	
	<ul style="list-style-type: none"> Հավաստագրերի, վճարման հանձնարարագրերի և անդորրագրերի առաքում 	
	<ul style="list-style-type: none"> Գումարի փոխանցում 	
	<ul style="list-style-type: none"> Պարտատոմսերի թողարկման ավարտ 	
	<ul style="list-style-type: none"> Պարտատոմսերի վերջնական վարկանիշի ստացում 	
	<ul style="list-style-type: none"> Իռլանդիայի ֆոնդային բորսայում ցուցակման բարեհաջող ավարտ 	

Հավելենք, որ մինչ Եվրապարտատոմների թողարկման հիմնական փուլերի համապատասխան քայլերի իրագործումը, առաջնահերթ անհրաժեշտ է լինելու ընտրել միջազգային իրավախորհրդատու, որը լավագույնս տեղեկացված կլինի Եվրապարտատոմների թողարկման գործընթացներին և կունենա համապատասխան փորձ: Միջազգային իրավախորհրդատուի առաքելությունը կլինի ոչ միայն խորհրդատվության տրամադրումը Եվրապարտատոմների թողարկման գործընթացի վերաբերյալ, այլ նաև տեխնիկական աջակցությունը՝ լավագույն ձևով Եվրապարտատոմների թողարկումը կազմակերպելու նպատակով: Միջազգային իրավախորհրդատուի ընտրության, ինչպես նաև նրա հետ աշխատելու ժամանակահատվածի համար կպահանջվի մոտավորապես 1.5 - 2 ամիս:

Եվրապարտատոմների թողարկման գործընթացի կարևորագույն փուլերից մեկը Գլխավոր տեղաբաշխողի ընտրությունն է, որը մեծ դերակատարում ունի ամբողջ գործընթացի կազմակերպման ընթացքում:

Ելնելով վերոնշյալից, ստորև ներկայացնում ենք Գլխավոր տեղաբաշխողի ընտրության մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները և հայտարարության կառուցվածքը:

Գլխավոր տեղաբաշխողի ընտրության մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները

Գոյություն ունի գլխավոր տեղաբաշխողին ընտրելու երեք մոտեցում

1) ուղղակիորեն համաձայնագիր է կնքվում Եվրապարտատոմների շուկայում գործունեություն իրականացնող որևէ տեղաբաշխողի հետ՝ թողարկողի կողմից նախապես սահմանված որոշակի որակավորման հայտանիշերի հիման վրա,

2) հայտարարվում է բաց մրցույթ, որին կարող է հայտ ներկայացնել Եվրոպարտատոմների շուկայում գործունեություն իրականացնող ցանկացած մասնակից,

3) հայտարարվում է փակ մրցույթ, որին մասնակցում են թողարկողի կողմից նախորոք ընտրված սահմանափակ քանակի մասնակիցներ:

Նպատակահարմար ենք համարում գլխավոր տեղաբաշխողի ընտրության մրցույթն իրականացնել երրորդ եղանակով, ընդ որում պետք է հնարավորություն տալ գլխավոր

տեղաբաշխողին ինքնուրույն ձևավորել տեղաբաշխման սինդիկատը՝ համաձայն մեր կողմից սահմանված սինդիկատի մասնակիցների որակավորման նվազագույն չափանիշների:

Հաշվի առնելով թողարկման կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար, նպատակահարմար ենք գտնում գլխավոր տեղաբաշխողի ընտրության և տեղաբաշխման սինդիկատի անդամների որակավորման նվազագույն չափանիշները սահմանել նույնը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բոլոր այն երկրները, որոնք բազմիցս կազմակերպել են թողարկումներ, իրենց առաջարկի վերաբերյալ պահանջները (Request for Proposal-RFP) ուղարկում են մի քանի ընտրված բանկերի: Փակ մրցույթն ավելի նախընտրելի տարբերակ է, քանի որ ընտրություն է կատարվում շուկայի լավագույն մասնակիցների միջև:

Մեր կարծիքով, ՀՀ համար կարևորվում է փակ մրցույթի միջոցով որակավորել այն ներդրումային բանկերին, որոնք հետճանաժամային շրջանում հաջողությամբ կարողացան դիմագրավել ծառայած մարտահրավերներին և մնացին մրցունակ ու ֆինանսապես կայուն:

Մեր երկրի համար այս կարևորագույն ծրագիրը պետք է վստահել լավագույններին, որի համար ներկայացնում ենք ընտրության չափանիշների հետևյալ մոտեցումը:

**Թողարկման գլխավոր տեղաբաշխողի ընտրության հայտարարության կառուցվածքը
(տեխնիկական առաջադրանք)**

Գլխավոր տեղաբաշխողին ներկայացվող նվազագույն չափանիշները

Գլխավոր տեղաբաշխողի ընտրության մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է բավարարեն հետևյալ նվազագույն չափանիշներին՝

- 2010-2013թթ. ընթացում ունենան ԱՊՀ երկրների սուվերեն թողարկողների համար հաջողությամբ իրականացրած Եվրապարտատոմսերի առաջնային (դեբյուտային) տեղաբաշխումների փորձ,
- 2010-2013թթ. ընթացում ունենան ԱՊՀ երկրների սուվերեն թողարկողների համար հաջողությամբ իրականացրած Եվրապարտատոմսերի առաջնային (դեբյուտային) տեղաբաշխումներին հաջորդող հետագա տեղաբաշխումների փորձ,
- ներառված լինեն 2012 թվականի արդյունքներով պետությունների համար, հատկապես ԱՊՀ երկրների, սուվերեն թողարկողների համար իրականացված Եվրապարտատոմսերի թողարկումների լավագույն տեղաբաշխողների շարքերում համաձայն Dealogic և Bloomberg Eurobond League-ի, CEEMEA sovereigns-ի և Global EM sovereigns-ի աղյուսակների (Հավելված 2):

Գլխավոր տեղաբաշխողի կողմից ներկայացվող տեղեկատվությունը

Գլխավոր տեղաբաշխողի ընտրության մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն տեղեկատվություն՝

- 2010-2013թթ. ընթացում ԱՊՀ երկրների սուվերեն թողարկողների համար իրականացրած Եվրապարտատոմսերի առաջնային (դեբյուտային) տեղաբաշխումների վերաբերյալ,
- 2010-2013թթ. ընթացում ԱՊՀ երկրների սուվերեն թողարկողների համար իրականացրած Եվրապարտատոմսերի առաջնային (դեբյուտային) տեղաբաշխումներին հաջորդող հետագա տեղաբաշխումների վերաբերյալ,
- Իրականացվելիք թողարկման կառուցվածքը, ձևաչափը, առաջարկվող ծավալը և մարման ժամկետը, առաջարկվող նախնական գնային հիմնավորումը, գործարքի իրականացման մանրամասն ժամանակացույցը, համաձայնագրերի և նախապայմանների փաթեթը և տեղեկատվության բացահայտման պահանջները,
- Գնային քաղաքականությունը և տեղաբաշխման միջոցառումների ռազմավարությունը,
- 5 կամ 10 տարի մարման ժամկետով Եվրապարտատոմսերի թողարկման օպտիմալ ծավալը, արժեկտրոնի եկամտաբերության չափը, առաջարկվող եկամտաբերությունը, միջին սվոփի տոկոսը և սպրեդը ուղենշային պարտատոմսերից,
- 5 կամ 10 տարի մարման ժամկետով Եվրապարտատոմսերի թողարկման կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը՝ գլխավոր տեղաբաշխողի ընդհանուր ամբողջական միջնորդավճարի առաջարկը, ֆիսկալ և վճարումների գործակալների միջնորդավճարի առաջարկը, լիստինգի և տպագրական ծախսերը, մարկետինգային ծախսերը (ներառյալ շրջագայությունները և շնորհանդեսները), բորսայում գրանցման ծախսերը, հավանական ենթակառուցվածքային ծախսերը, օրենսդրական և այլ պարտադիր վճարները, իրավախորհրդատուների և գործարքին առնչվող պարտադիր այլ խորհրդատուների միջնորդավճարները, այլ ծախսեր՝ առավելագույն սահմանաչափերի սահմանափակմամբ,
- Շուկայական պայմանները՝ ընթացիկ միտումները, 2013թթ. հեռանկարը, ակնկալվող գործարքների նկարագրությունը, ՀՀ դեբյուտային գործարքի համար շուկա մուտք գործելու առավել արդյունավետ ժամանակահատվածը,
- Հիմնական ներդրողները, թիրախային աշխարհագրական և ներդրողների բաշխվածությունը,

- Եվրապարտատոմսերի բաշխման ցանցը, տեղաբաշխողի կողմից արժեթղթերի վաճառքի և առևտրի հնարավորությունները,
- Տեղաբաշխողի թիմը՝ պարտքային կապիտալի շուկայի գործառնությունների գործարքային թիմի որակավորումը և մասնագիտական պատրաստվածությունը, վաճառքն իրականացնող թիմի որակավորումը և մասնագիտական պատրաստվածությունը,
- Առաջարկություններ իրավախորհրդատուների և Եվրապարտատոմսերի թողարկման այլ մասնակիցների վերաբերյալ,
- Տեղաբաշխման գործարքում այլ լրացուցիչ աջակցությունը, երկրորդային շուկայում աջակցություն ցուցաբերելու պարտավորությունը և դրանց շրջանակի նկարագիրը,
- Մարկետինգային ռազմավարության նկարագիրը, շրջագայությունների ու շնորհանդեսների (Road Show) ժամանակացույցը և աջակցությունը այդ գործընթացներում:

3. Եվրապարտատոմսերի թողարկումը կանխիկ հոսքերի տեսանկյունից

Եվրապարտատոմսերի թողարկումը կանխիկ հոսքերի տեսանկյունից դիտարկվում է, որ եվրապարտատոմսերի թողարկումը տեղի կունենա 2014 թվականին և կմարվի ՌԴ-ի նկատմամբ Հայաստանի ունեցած 500 մլն ԱՄՆ դոլար պարտքը: Նշված պայմանում ուսումնասիրվում է միայն եվրապարտատոմսերի թողարկման 3 հիմնական սցենար՝

- 1-ին՝ կթողարկվի 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով,
- 2-րդ՝ կթողարկվի 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով,
- 3-րդ՝ կթողարկվի 1000 մլն ԱՄՆ դոլար ծավալով:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ վերոնշյալ թողարկումների դեպքում ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների գծով ծախսերը միջին հաշվով տարեկան կավելանան համապատասխանաբար՝ 13, 28 և 43 մլն ԱՄՆ դոլարով (եվրապարտատոմսերի գծով հաշվարկված տոկոսավճարները նվազեցվել են ՌԴ վարկի տոկոսավճարների գծով վճարման ենթակա գումարների չափով):

Զուգահեռաբար, կավելանան նաև վերաֆինանսավորման և տոկոսադրույքի վերաֆիքսման ռիսկերը, քանի որ պետությունը մարման ժամկետի վերջում պետք է միանվագ մարի թողարկված Եվրապարտատոմսերի ամբողջ ծավալը:

Գլուխ II - Պարտքի ավելացման սահմանափակումները

4. Արտաքին պետական պարտքի ավելացման սահմանափակումները

Արտաքին պետական պարտքը և տնտեսական աճը

